ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Լ. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Զաքարյան.

Ի պատասխան Ձեր 30.07.2019թ. հ.01/312 գրության՝ տեղեկացվում է, որ Լուկաշին թաղամասում շահագործվող միկրոավտոբուսային հ.26 երթուղին սպասարկող կազմակերպությունը, առանձին տրանսպորտային միջոցների անսարքությունների և հիմնականում անհրաժեշտ քանակի վարորդների բացակայության պատճառով, չնայած բազմաթիվ փորձերին, դեռևս չի կարողանում ապահովել երթուղու բավարար սպասարկումը սահմանված քանակի շարժակազմով (օրական երթուղի է դուրս բերվում միջինը 5 միավոր շարժակազմ):

Երթուղին սպասարկող կազմակերպությանը կրկին հանձնարարվել է ձեռնարկել սպառիչ միջոցներ՝ երթուղում միկրոավտոբուսների քանակն ավելացնելու և ուղևորների սպասարկման վիճակը բարելավելու համար:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Լուկաշին թաղամասի տրանսպորտային սպասարկման բարելավման նպատակով քննարկվում են նաև հնարավոր այլ տարբերակներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ